

ՀԱՅ ԿԼԱՍԻԿՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՃԻՇՏ ՈՒՂԻՈՎ¹

Հայկական ՍՍՌ Դիտությունների Ակադեմիայի իսկական անգամ պրոֆ.-դոկտոր Արսեն Տերտերյանի քառասնամյա գիտական-քննադատական գործունեության առթիվ Վ. Մ. Մուրտուզի անվան Երևանի Պետական Համալսարանը հրատարակել է նրա «Հայ կլասիկներ» խորագրի կրող սավաթածավալ հատորը, որն արժեքավոր ավանդ է սովետահայ գրականագիտության մեջ:

Ա. Տերտերյանը հանդիսանում է հայ գրականության ականավոր մասնագետն ու պատմաբան-գրականագետը: Նուրբ շորս աասնյակ աարի է, որ նա զբաղված է մայրենի գրականության ուսումնասիրության ու մասնաշաղկապման գործով: Ըժ այդ ժամանակամիջոցում նա ավել է հարյուրից ավելի աշխատություններ, որոնցից շատերը, իրեն գիտական լուրջ հետազոտության արգասիքներ՝ այսօր էլ շարունակում են պահպանել իրենց թանկությունն ու արժեքը: Այդ աշխատություններում տաղանդավոր կերպով լուսաբանված են մեր գրականության ու հասարակական մտքի բազմապիսի երեույթներն ու պրոբլեմները:

Ներկա ժողովածուն ընդգրկում է տասնմեկ հեղինակ՝ Ալիշան (էջ 5—82), Մերենց (էջ 83—120), Բաֆֆի (էջ 121—178), Աղայան (էջ 179—232), Սունդուկյան (էջ 233—257), Պարոնյան (էջ 258—464), Մուրացան (էջ 465—607), Նար-Դոս (էջ 608—679), Ե. Օտյան (էջ 680—776), Թումանյան (էջ 777—863) և Հ. Հակոբյան (էջ 864—907):

Ժողովածուի մեջ ամփոփված նյութերի մեծ մասը լույս է տեսել սովետական պարբերականներում, մի քանիսը հայ կլասիկների երկերի վերահրատարակության առթիվ գրված ներածություններ են, որոնցից ամեն մեկը, սակայն, մի արժեքավոր ուսումնասիրություն է: «Նար-Դոսի ստեղծագործությունը» հեղինակի՝ նախառնվողուցիտոն շրջանում գրած երկերից միակն է, որ տեղ է գտել սույն հատորում:

Տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով գրված այդ երկերը, ինչպես նշել է գրքի հեղինակը, ունեն մի հիմնական նպատակ՝ «ցույց տալ հայ ժողովրդի, հայ գրականության վեհությունը և դրանով տոգորել ընթերցողին»:

Առաջ քաշելով հայ կլասիկների «էպոխալեն ստեղծագործությունը», վառ հայրենասիրությունն ու հումանիզմը՝ հեղինակը բացահայտում է մեր գրականության սերտ կապը ժողովրդի առաջավոր ձգտումների հետ և ցույց տալիս, թե ինչի համար են կովել մեր քաջարի նախնիները և ինչ են երազել նրանց պայծառամիտ որդիները: Այստեղ առաջին պլանի վրա են արդարության և ճշմարտության վսեմ երազանքը, արդարության համար մղվող պայքարը և հասարակական կյանքի արդարացի ձևերի որոնումը, — ահա այն տարրերը, որոնցով տոգորված են հայ կլասիկների լավագույն

¹ Ակադ. Արսեն Տերտերյան — «Հայ կլասիկներ», Պետական Համալսարանի հրատարակություն, Երևան, 1945, 907 էջ:

երկերը և որոնց միջոցով նրանք նպաստել են անկախութեան համար մարտընչող մեր ժողովրդի ազատագրական պայքարին, նրա քաղաքական ինքնագիտակցութեան բարձրացմանը: «Մեծ արվեստագետները կենդանի են մեզ համար: Նրանց ջանքերը գուր չեն անցել, նրանց լավագույն երկերը արթնացրել են մտքեր և օգնել ժողովրդին առաջ ընթանալու և դրանով իսկ գտնելու ազատագրման ուղին»: Մեր պարտիայի կենտրոնական օրգան «Պրավդայի» այս նշանավոր խոսքերը դարձնելով յուր հետազոտական աշխատանքի հիմնաքարը՝ Ա. Տերտերյանը հասարակական-քաղաքական, գրական շարժումների ընդհանուր ֆոնի վրա մեկնաբանում է հայ գրական պրոցեսի օրինաչափութիւնը և դրսևորում մեր կլասիկների ստեղծագործութիւններում եղած բոլոր առաջադիմական, բեմադրողական նկրտումները: Հեղինակը, սակայն, ձգտել է ոչ միայն ներկայացնել կլասիկ գրողների հասարակական-քաղաքական հայացքները, այլև վեր հանել նրանցից յուրաքանչյուրի գրական առանձնահատկութիւնը, հաշիւ առնել նրանց գրական ժանրերը և բնութագրել նրանց գործերի ուղղութիւնները: Եվ այդ ամենը տրված է միանգամայն բնական, պարզ ու ճշմարտացի և խորապես համոզիչ, որովհետև յուրաքանչյուր խնդրի վերլուծութիւնը խարսխված է գրական-պատմական հարուստ փաստերի հիմքի վրա:

Վերիմաստավորելով հայ կլասիկների ստեղծագործական նվաճումները՝ անվանի գիտնականը հանգամանորեն քննում է նաև նրանց ստեղծագործութիւնների ծագման, առաջացման ու ձևավորման պատճառները, ցույց տալիս, թե ինչ հարաբերութիւն ունի ստեղծագործողի արվեստը իրականութեան հետ, որն է իրականութեան յուրացման նրա գեղարվեստական մեթոդը, և միաժամանակ բնութագրում է տվյալ հեղինակի էսթետիկական հայացքները:

Այդ տեսակետից խիստ ուշագրավ է Պարոնյանին նվիրված ուսումնասիրութիւնը, որը ծավալով ամենից ընդարձակն է ներկա հատորում տեղ գտած նյութերի մեջ: Անցյալում, ինչպես և մեր օրերում, քննադատներից շատերն են գրել ու խոսել Պարոնյանի երգիծաբանութեան մասին, բայց նրանցից և ոչ մեկը ուշադրութիւն չի դարձրել մեծանուն երգիծաբանի գրականագիտական հայացքների վրա: Նրանց աչքից վրիպել են Պարոնյանի գրականագիտական թեորիայի այնպիսի հանգույցներ, ինչպիսիք են երգիծանքի էսթետիկան, ռեալիզմի տեսութիւնը, նոր գեղարվեստական թատրոնի սկզբունքները, քննադատութիւնը իբրև գրական ժանր, գրականութեան ժողովրդայնութիւնը, իդեալիստական էսթետիկայի ոչնչացումը, գրական նոր սերնդի դաստիարակութեան և ինքնուրույն ազգային գրականութիւն ստեղծելու պրոբլեմները: Մեզանում Տերտերյանը առաջինն է, որ իր սենոուն ուշադրութիւնը դարձնում է հենց այդ խնդիրների վրա և տալիս հանճարեղ երգիծաբանի գեղագիտական հայացքների խորագնին ու բազմակողմանի քննութիւնը: Ուսումնասիրութեան մեջ Պարոնյանը բնութագրում է որպես նորարար, որը հայ գրականութեան մեջ նոր խոսք է ասել առաջին հերթին երգիծական ժանրերի բնագավառում և այնուհետև իր անձնական փորձը հիմնավորել է ու դարձրել գեղարվեստական սեփական տեսութեան ամուր, բաղա՝ «Պարոնյան-երգիծաբանը, — գրում է հեղինակը, — տրիբուն էր և նա պահանջում էր երգիծաբանութիւնից՝ առաջին հերթին հասարակական և քաղաքական ճշմարտութեան պաշտպանու-

թյունը, «վախուկ զինվորի պես վահանի հետևում չթաքնվել», այլ ճակատաբաց խիզախել այն բոլորի դեմ, ինչ որ դեմընթաց էր ժողովրդի շահերին և ջուր էր ածում «հարստապետության» ջրաղացին» (էջ 277)։ Հենց այս ճշմարտությունն է մեծ երգիծաբանը դարձնում յուր պաշտպանած ռեալիստական մեթոդի հիմքը, պահանջելով իրականության հարազատ ու անխարդախ արտացոլում։ Այդ կերպ, նկատում է հեղինակը, նրա երգիծանքի մեթոդը համընկնում էր ռեալիզմի էսթետիկային։ Այս վերջինը բացահայտելու նպատակով Ա. Տերտերյանը մանրամասն կանգ է առնում մեր երգիծաբանի հասարակական մտածողության հիմունքների վրա, որոնք պատվանդան են հանդիսացել նրա ռեալիզմի էսթետիկական շենքի համար։ Այնուհետև նա հանգամանորեն քննում է Պարոնյանի թատերագիտական հայացքները, որոնք կազմում են երգիծաբանի էսթետիկական ժառանգության հարուստ բաժիններից մեկը։ Շիլլերի նման՝ հայ երգիծաբանը իր զրական գործունեության սկզբից մինչև վերջ ուշադիր վերաբերվում էր ցույց տվել հայ թատրոնի դերասանական կոլեկտիվին, ռեպերտուարի, թարգմանական զրականության և ինքնուրույն դրամատուրգիայի ստեղծագործական խնդիրներին։ Ոչ միայն իբրև թատերական քննադատ, այլև որպես դրամատուրգ՝ Պարոնյանը իր ստեղծագործությամբ ճանապարհ է հարթել ուրիշների համար և զրական դաստիարակ հանդիսացել հայ բեմի գործիչներին։ Այս կապակցությամբ Ա. Տերտերյանը հարուստ փաստերով ցույց է տալիս, թե ինչ նորություններ էր բերում պարոնյանական կոմեդիան ազգային-ռոմանտիկական ռդբերգությունների համեմատությամբ։ Լինելով հայ պատմական ողբերգության անողոք քննադատ, մեծ երգիծաբանը միևնույն ժամանակ զարգացրել է զրական քննադատությանը իբրև ժանր և դրա հետ տվել այն հիմնական սկզբունքները, որոնցով պետք է ղեկավարվի ամեն մի քննադատ։ Իր ուսումնասիրության հաջորդ զլխում հեղինակը մանրամասն կերպով ցույց է տալիս, թե Պարոնյանը ինչ գործնական աշխատանք է կատարել քննադատության ժանրի մեջ և ինչ կիրառում է ստացել նրա գիտական էսթետիկան։ Նշելով Պարոնյանի քննադատության հրապարակախոսական ընույթը՝ հեղինակը փայլուն կերպով վեր է հանում Պարոնյան-քննադատի առանձնահատկությունները, որպիսիք են՝ հրապարակախոսական սրությունը, անաչառ խստությունը, հանրագիտականությունը, պատկերավորությունը, կոնկրետությունը, անսպառ սրամտությունը և, վերջապես, համարձակությունն ու գիտականությունը։ Այդպիսի հատկություններով օժտված՝ Պարոնյանը, որպես քննադատ, գրեթե քառորդ դար պաշտպանել է հայ դպրությանը՝ ղեկավար սկզբունք ունենալով զրականության ժողովրդայնությունը։ Այս վերջին հարցն է քննում հեղինակը յուր ուսումնասիրության վեցերորդ զլխում (էջ 355—379)։ Հետազոտության վերջին զլուխը նվիրված է զրական ժառանգության խնդրին (էջ 444—464)։

«Պարոնյանի գեղագիտական հայացքները» բազմափաստակ գիտնականի արժեքավոր ավանդն է հայ էսթետիկական մտքի պատմության մեջ ընդհանրապես և պարոնյանափիտության մեջ մասնավորապես։ Այստեղ հեղինակը ոչ միայն հանրագումարի է բերել և լուսաբանել անմահ երգիծաբանի էսթետիկական ժառանգությունը, այլև արել է արժեքավոր մի շարք քննական գիտողություններ արեմտահայ զրականության մասին։

Նշանակալից հետազոտութիւն է նաև «Երվանդ Օտյանի ստեղծագործութիւնը», որ իր ծավալով ամենաընդարձակն է նշանավոր երգիծաբանի մասին բարդ եղած գրա-քննադատական դրականութեան մեջ: Անցյալում «դրական բախտը» չի ժպտացել Օտյանին. նա որպէս արվեստագետ նույնիսկ այսօր հայտնի է չնչին փոքրամասնութեանը, մինչդեռ Սրվանդ Օտյանը, որպէս սանգագործող, հայ գրական մշակութի հայտնի դեմքերից մեկն է: Հանդես գալով Պարոնյանից հետո՝ Օտյանը յուր ստեղծագործութեան մեջ զեղարվեստորեն պատկերադժեց հայ հասարակական կյանքի մի ամբողջ պատմաշրջան՝ այն կոնկրետացնելով կենդանի տիպերի միջոցով: Հայ ազգայնական պարտիաների միջև եղած հակամարտութիւնները, նրանց հակաժողովրդական ավանդուրդիստական արարքների ուսուցանական ցուցադրումն ու մերկացումը դարձան անվանի երգիծաբանի ուշագործութեան կենտրոնը:

Իր ուսումնասիրութեան մեջ Տերտերյանը տալիս է Օտյանի ստեղծագործութեան հանրամատչելի վերլուծութիւնը: Սեղմ ու հատու խոսքերով բնութագրելով Օտյանին որպէս բարոյական արատների ախտորոշիչ՝ նա մանրամասն կերպով քննութեան է առնում նրա վեպերը («Վաճառականի մը նամակները կամ կատարյալ մարդ ըլլալու արվեստը», «Ընտանիք, պատիւ, բարոյական», «Ազգային բարեբար», «Թաղականին կնիկը», «Միջնորդ տիր պապան» և այլն)՝ առանձնապէս կանգ առնելով նրա հիմնական գրական ժանրի՝ երգիծաբանութեան վրա: Հեղինակը հանգամանորեն լուսաբանում է այն առանձնահատկութիւնները, որոնցով հատկորոշվում է Օտյան-երգիծաբանը հայ գրականութեան մեջ: Այնուհետև խոսելով հայ և օտար գրականութիւնների հետ Օտյանի շփման մասին՝ նա հատկապէս ծանրանում է Պարոնյանի և Օտյանի գրական արվեստի նմանութեան և տարբերութեան վրա՝ ջուրջ տալով Օտյանի ստեղծագործութեան ազդակները:

Ա. Տերտերյանը վեր է հանել հայ կլասիկներից յուրաքանչյուրի տեղն ու դերը մեր գրականութեան պատմութեան մեջ: Սեր ասածի պերճախոս ապացոյց է «Բաֆֆու «Սամվել» պատմական վեպը» հետազոտութիւնը, որն այդ հրաշակերտ վեպին միանգամայն արժանավայել գործ է: Տերտերյանը փայլուն կերպով վերադնահատել է «Սամվել» պատմավեպը, տվել է նրա հեղինակի գրական-հասարակական միջավայրը, բնութագրել է գրողի աշխարհայացքի զարգացման ընթացքը: Բաֆֆու պատմագիտական հայացքների ու վեպի դեղարվեստական արժանիքների վարպետ վերլուծութեամբ բացահայտելով «Սամվել»-ի հմայքի գաղտնիքները՝ Տերտերյանը միաժամանակ լուսաբանում է այդ մեծ կլասիկի սովորոտ կողմերը: Նա աչք չի փակում վիպասանի ազգայնական որոշ հայացքների առաջ, բացատրում ու ցույց է տալիս նրա սայթաքումները և ընդգծում այն լավագույնն ու առաջավորը, որ Բաֆֆուն դարձնում է 1870—80-ական թ. թ. առաջավոր սերնդի ներկայացուցիչներից մեկը, որն իր ստեղծագործութիւններով խոշոր դեր խաղաց այդ շրջանի հայ ազատագրական շարժման պրոպագանդայի գործում: Ներկա ուսումնասիրութիւնը ընդլայնում է մեր գիտելիքները Բաֆֆու մասին և առաջ մղում հայ խոշորագույն վիպասանի ստեղծագործութեան ուսումնասիրութեան գործը:

Հայ կլասիկների պատկերասրահում իր ուրույն և պատվավոր տեղն

ունի Մուրացանը, որի նկատմամբ անցյալում լիբերալ-բուրժուական, ադաբայնական ու պահպանողական քննադատությունը մեծ մասամբ գերադասել է լռել, իսկ երբեմն արտահայտվել կիսաբերան։ Ա. Տերտերյանը իր ժամանակին հանդուգն պայքարի ելավ արաղիցիոն ըմբռնումների դեմ և շարժեց անվանի գրողի շուրջն ստեղծված լուսթյան սառույցը։ Համարձակորեն կարելի է ասել, որ Մուրացանի թողած գրական հարուստ ժառանգությունն ուսումնասիրման ու մեկնաբանման, ինչպես և ժողովրդականացման պատիվը անվիճելիորեն պատկանում է ընկ. Տերտերյանին։ Ավելի քան երեք տասնամյակ առաջ հրապարակած իր ծավալուն մենագրության մեջ՝ նա անխոնջ կերպով ուսումնասիրեց ու բազմակողմանիորեն վերլուծեց Մուրացանի գրեթե ողջ ստեղծագործությունը և ցույց տվեց նրա արժեքն ու նշանակությունը մեր գրականության պատմության մեջ։ Ներկա հատորում տեղ գտած հոդվածաշարը, որ ընդգրկում է սովիտական շրջանում Մուրացանի «Լնտիր երկերի» քառահատոր հրատարակության առթիվ գրված առաջաբանները («Մուրացանն իբրև գյուղագիր», «Մուրացանի պատմըվածքները», «Մուրացանի «Էլուսավորության կենտրոնը» և «Գևորգ Մարգպետունին» իբրև պատմական վեպ»), աճյուղտ, ավելի ամբողջական և մանավանդ ավելի բարձրարժեք ուսումնասիրություն է։ Այստեղ մի կողմից հաղթահարված են նախորդ հետազոտության մեջ եղած թերությունները, մյուս կողմից շեշտված ու առաջ են քաշված այնպիսի հարցեր, որոնք առաջինում կամ թույլ էին արծարծված և կամ իսպառ բացակայում էին։ Այդ վերաբերում է հատկապես Մուրացանի գյուղագրությանը, որի նշանակությունն այստեղ բացահայտված է առավել խորությամբ։ Ապա միանգամայն նոր է Մուրացանի պատմագիտական հայացքների տեսությունը, որ տրված է «Գևորգ Մարգպետունի» վեպի վարպետ վերլուծությամբ։ Այս կապակցությամբ առանձնակի ուժով վեր է հանված այն ջերմ ու անձնվեր ժողովրդասիրությունն ու հայրենասիրությունը, որոնցով համակված է Մուրացանի ողջ ստեղծագործությունը։

Ուշագրավ երևույթ է Շնար-Դոսի ստեղծագործությունը, որը թեև գրված է 1913 թ., բայց հեղինակն ավելորդ չի համարել զետեղել իր ներկա ժողովածուի մեջ: Այդ աշխատության մեջ, դարձյալ հակառակ լիբերալների (Լեո և այլք), հեղինակը վեր է հանել Նար-Դոսի գեղարվեստական կարողությունը, նրա ռեալիզմի յուրահատկությունները, աշխարհայացքի և արվեստի բնորոշ գծերը:

Երկրորդ հոգվածը՝ «Նար-Դոսի պատմվածքները» գրված է 1934 թ. նույն հեղինակի «Մեր թաղը» պատմվածաշարի վերահրատարակության առիթով, որպես ներածություն։ Այդտեղ հմուտ գրչով տրված են Նար-Դոսի ստեղծագործության առանձնահատկությունները, որոնք բնորոշ երանգներով կոնկրետացված են հիշյալ պատմվածքներում, և որոնցով Նար-Դոսը տարբերվում է մեր մյուս ռեալիստներից։ Այստեղ առանձնակի ուշադրություն դարձնելով անվանի գրողի տիպական արվեստի վրա՝ հեղինակը պարզում է իրականության ընկալման և զրսևորման նրա կերպը. «ոչ թե

¹ 11. Տեղեկությամբ—Մարաշի ներքին գեղ-գեղացիների, 1913 թ., Ս. Պետերբուրգ:

տկուր իրեր, այլ սրանց ղինամիկան, ոչ թե սոսկ դրուժյուններ, այլ վերջիններիս մեջ ծագող դրամատիզմը» (էջ 675)։

Իր վերոհիշյալ բոլոր ուսումնասիրություններում էլ Ա. Տերտերյանը հանդես է բերում ջերմ ու բոցավառ հայրենասիրություն։ Այս վերջինը, սակայն, ավելի ցայտունությամբ երևան է եկել հատկապես Հայրենական Մեծ պատերազմի շրջանում հեղինակի դրած հետազոտությունների մեջ, ուր առաջ են քաշված հայ կլասիկ գրողների հայրենասիրական տրագիգիաները, դեղարվեստական վարպետությունը և ըստ ամենայնի ընդգծված է մեր դասական գրականության արդիական նշանակությունը։ Այդ իմաստով մասնավորապես աչքի է ընկնում «Ալիշանը և հայրենասիրությունը» աշխատությունը, որի մեջ ականավոր գրականագետը մեծ հմտությամբ մեկնաբանում է ազգային հերոսական պոեզիայի ամենախոշոր ներկայացուցիչներից մեկի թողած գրական ժառանգությունը։ Սվ որ կարևորն է, նա Ալիշանի պոեզիան կապում է 60-ական թվականների էպոխայի հետ ու բացահայտում Նահապետի բանաստեղծության պրոգրեսիվ բնույթը։ Հեղինակը ցույց է տալիս, որ Ալիշանի հայրենասիրության և ժողովրդական հերոսության աղբյուրները հանդիսացել են հայ վաթսուներկանները մի կողմից և մայր ժողովրդի պատմական փայլուն սխրագործությունները՝ մյուս կողմից։ «Այդ երկու կողմից էլ նրա ստեղծագործությունը հնչակից է դառնում մեր օրերի անմոռաց դեպքերին, մեր ժողովրդական ապրումներին» (էջ 5)։ Իրավացիորեն եզրակացնում է Տերտերյանը և ճիշտ կերպով լուծում Ալիշանի ու վաթսուներկանների փոխհարաբերության պրոբլեմը։ Այս տեսակետից ելնելով՝ նա քննադատում է Ալիշանի մասին եղած սխալ կարծիքները (Իր. Արծրունի, Հեո, Մ. Բերբերյան, Կիրպոտին և ուրիշներ) և տալիս բանաստեղծ գիտնականի՝ գրական փաստերի ճշգրիտ ուսումնասիրության վրա հիմնված, մտածված, հստակորեն գծագրված պատկերը։ Այնուհետև Ալիշանի հայրենասիրական պոեզիայի գեղարվեստական արժեքը ցույց տալու համար Տերտերյանը տալիս է Նահապետի երգերի բազմակողմանի վերլուծությունը։ Միաժամանակ նա նշում է մեծ բանաստեղծի ունեցած զգալի ազդեցությունը հետագա շրջանի հայ պոեզիայի զարգացման վրա և ալիշանական բանաստեղծության ակտուալությունը մեր օրերի համար։ Սույն ուսումնասիրությամբ վերակենդանանում է հայ պոեզիայի խոշորագույն ներկայացուցիչներից մեկի ստեղծագործական կերպարը և թարմացվում է նրա ստեղծագործության արժեքը ընթերցողի աչքում։

Կլասիկ գրականության հայրենասիրական մոտիֆների ուսումնասիրության ու մասսայականացման տեսակետից խիստ հետաքրքրական է «Հայրենասեր կինը Մերենցի վեպերում» հոդվածը, որը շատ բովանդակալից մի ուրվագիծ է՝ հագեցված թե փաստական հարուստ տվյալներով և թե քննական դիտողություններով։ Այստեղ հստակորեն ներկայացվում են բյուզանդական գերիշխանության դեմ մարտնչած այն հայրենասեր կանանց կերպարները (Հեղինե, Մարգարիտ, Սեթա), որոնք տղամարդկանց հետ մրցելով իրենց հայրենասիրությամբ ու հերոսական անձնազոհությամբ՝ Մերենցի գրչի տակ տիպականացել են անմոռաց գույներով։ Հիմք ընդունելով հայրենասիրության ու ժողովրդական հերոսության իդեան՝ հեղինակը միանգամայն նոր գնահատության է ենթարկում Մերենցի ողջ գրական ժառան-

գությունը, նշանավոր հեղինակը ընթերցողին ներկայանում է իր վառ հայրենասիրությամբ, անձնազուրկ նվիրվածությամբ մայրենի լեզվին ու զրականությանը ե իր ժրջան աշխատասիրությամբ:

Ոչ պակաս արժեքավոր են նաև Թումանյանին ու Աղայանին նվիրված ուսումնասիրությունները, որոնք առանձին զրքով հրատարակվել են Վ. Մ. Մուրավի անվան Երևանի Պետական Համալսարանի կողմից:¹ Առաջինում հեղինակը, վեր հանելով մեր հանճարեղ բանաստեղծի ստեղծագործության հայրենասիրական բնույթը՝ բացահայտում է նրա սոցիալական էությունն ու քաղաքական նպատակասլացությունը: Քննելով մեծանուն բանաստեղծի ստեղծագործության ժողովրդական բովանդակությունը՝ Տեր-տերյանը ցույց է տալիս դրա համամարդկային նշանակությունը, որով Թումանյանը վեր է բարձրանում ազգային շրջանակից՝ «Թումանյանը, զրքում է հատորի հեղինակը, կարողանում է իր հայրենասիրությունը շաղկապել ինտերնացիոնալիզմի գաղափարի, բարձր հումանիզմի հետ: Նրա հայրենասիրությունը պայմանավորված է բոլոր ժողովուրդների բարեկամությամբ, ուստի և նրա գրվածքների մեջ ոչ միայն հայր, այլև ամեն մի ժողովուրդ փառաբանվում է իր ազատագրության, քրտնաջան աշխատանքի և պատմական սխրագործության համար» (էջ 783): Իր ուսումնասիրության հաջորդ գլուխներում հեղինակը փաստական հարուստ նյութի հիման վրա մանրակրկիտ կերպով տալիս է Թումանյանի հայրենասիրական պոեզիայի գեղագիտական կողմի քննությունը, որ ըստ էության հանդիսանում է մեծ բանաստեղծի արվեստի վերլուծությունը՝ կապված ժողովրդական պոետիկայի որոշ առանձնահատկությունների հետ: Այս վերջին կետից է սկսվում Աղայանը և ժողովրդական հերոսությունը խորագիրը կրող հետազոտությունը, ուր որոշակիորեն ընդգծված է Աղայանի ստեղծագործության ռեվոլյուցիոն-գեմոկրատական բնույթը: Աղայանի կապը վաթսուներկան թվականների արմատական-դեմոկրատական գործիչների հետ հիմնավորվում է շատ ավելի հստակ կերպով: Մի շարք մանրամասների պարզաբանության համար հեղինակը նորից քրքրել է հին մեմուարները և մանրամասնորեն ուսումնասիրել է պոետի կյանքը, որոնցով միաժամանակ առավել շեշտակիությամբ զրքսկորվում է գրողի արվեստի դեմոկրատական էությունը: Այս կապակցությամբ հեղինակը խստորեն քննադատում է Աղայանի ստեղծագործության շուրջը ստեղծված սխալ տեսակետները ե առաջադրում միանգամայն նոր հարցեր, որոնց ուղղությամբ հարկավոր կլինի հետազոտում լուրջ աշխատանք ծավալել: Ընդհանուր և բնորոշ գծերով տալով Աղայանի կյանքի և հասարակական գործունեության նկարագիրը՝ հեղինակը այնուհետև լայնորեն վեր է հանում գրողի ստեղծագործության մեջ արտահայտված ժողովրդական հերոսության իդեան, որով տողորված է եղել նաև ինքը Աղայանը յուր անձնական կյանքում, ուր նա հանդիսացել է «քաջության տիպար» (էջ 179): Եվ ուսումնասիրողը բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, թե Աղայանի անձնական կյանքում ինչ արտահայտություն է գտել նրա գավառած ժողովրդական հերոսության գաղափարը և որն է նրա հասարակական խարիսխը:

¹ Ա. Տերտերյան—Էջա, հայրենասեր գրողներ (երկու դիմագիծ)», Երևան, 1942 թ., 140 էջ.

Պետք է նկատել, որ նշված հոդվածներից յուրաքանչյուրը զբաղված է Հայրենական պատերազմի տարբեր էտապներում և այս կամ այն չափով կապված է ռազմականատնետու մտեղի ունեցող իրադարձությունների հետ: Հայրենասեր գիտնականը քայլել է մեր փոթորկահույզ կյանքին համընթաց և ունկնդրելով ժամանակի ձայնին՝ ձգտել է բավարարել կյանքի պահանջները ու իր դիտական գործունեությանը նպաստել սովետական ժողովրդի պատմական հաղթանակին: Այսպես, օրինակ, այն օրերին, երբ պրոլետարական ռևոլուցիայի օրրանը՝ Լենինգրադը շրջապատված էր գերմանա-ֆաշիստական հորդանքերով, Տերտերյանը հրապարակ հանեց «Հակոթ Հակոբյանը և մեր օրերը» հետազոտությունը, որի մեջ նա ցույց տվեց, թե ինչպես ռևոլուցիայի երգիչը յուր ստեղծագործության շատ կողմերով համահնչյուն է մեր Հայրենական Մեծ պատերազմին և այդ պատերազմի մեջ Լենինի քաղաքի խաղացած նշանավոր, պատմական աննախընթաց դերին: Եվ պատմական անալոգիաները գծված են այնպիսի հստակ տրամաբանությամբ, որ թվում է, թե մեր օրերի աշխարհացունց դեպքերին է արձագանքել Հակոբյանը ժամանակով մեզնից շատ առաջ: Ինչպես սիրով ու կրքոտությամբ գրված այդ ռևուլյուցիոնարության մեջ բնորոշ գծերով արված է հայ ռևոլուցիոն պոեզիայի վետերանի գեղարվեստական կերպարը՝ որպես ազատասեր ու հայրենասեր բանաստեղծի, որը կենդանի կամուրջ է մեր կլասիկ ժառանգության և սովետահայ գրականության միջև: Հեղինակը ցույց է տալիս, որ հենվելով լոյնիկյան պարտիայի ռևոլուցիոն թեորիայի, Շահումյանի և Սպանդարյանի հետ ունեցած բարեկամական կապի, ինչպես և ժողովրդական կյանքի ճանաչողության ու իր սեփական կենսափորձի վրա, Հակոբյանը տակավին նախառեվոլյուցիոն շրջանում հայ կլասիկ ռեալիզմի մեջ մտցրեց այն նոր ռևոլուցիոն-ռոմանտիկական տարրերը, որոնք սովետահայ գրականության մեջ զարգանալով դարձան սոցիալիստական ռեալիզմի բաղկացուցիչ գծերը: Նշելով, որ Հակոբյանի ստեղծագործության միջուկը կազմում են սոցիալիզմի համար մղվող պայքարը և հերոսության փիլիսոփայությունը՝ Տերտերյանը հենց դրանով է բացատրում բոլշևիկ պոետի ստեղծագործության գեղարվեստական ձևը, որը համակված է դուրացական պաֆոսով: Հակոբյանի մյուս ռևուլյուցիոններից ընկ. Տերտերյանը տարբերվում է ոչ միայն իր խոր գիտականությամբ ու գրականագիտական մտքի հարստությամբ, այլև նրանով, որ նա առաջին անգամ քննության է ենթարկում ժողովրդական բանաստեղծի պոետիկան և ցույց է տալիս, թե ինչ ուսանելի հատկություններ ունի Հակոբյանի արվեստը մեր օրերի համար, որն է նրա գոյության իրավունքը:

«Սունդուկյանը և ժողովուրդների բարեկամությունը» աշխատությունը զբաղված է այն ժամանակ, երբ հիտլերյան հորդանքերը սողում էին դեպի հարավ, դեպի մեր հարազատ Անդրկովկասը: Այս աշխատության մեջ ամենայն պայծառությամբ վեր է հանված մեր գրականության ինտերնացիոնալ բնույթն ընդհանրապես և անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության գրոշակակիր Սունդուկյանի գեղարվեստական դիմանկարը հատկապես: Հեղինակը սեղմ, բայց ոգեշունչ էջերում արտահայտիչ կերպով լուսաբանել է «Պեպո»-յի անմահ հեղինակի ստեղծագործության մեծ նշանակությունը եղբայրական ժողովուրդների կուլտուրական կյանքում:

Այստեղ, հարկավ, անհնարին է ամբողջովին ընդգրկել այն արդյունքները, որ, շնորհիվ բազմաշխատ գիտնականի արգասավոր գործունեության, ձեռք են

բերված հայ կլասիկների ուսումնասիրության վերաբերյալ, Մենք հնարավորություն չունենք առավել մանրամասնության վրա կանգ առնելու այս հատորի մեջ զետեղված բոլոր հետազոտությունների վրա: Ընթերցողը, անտարակույս, սիրով ու հետաքրքրությամբ կկարդա շատ կողմերով արժեքավոր այդ ժողովածուն: Այստեղ անհրաժեշտ է միայն ուշադրություն դարձնել մի քանի կարևոր մոմենտների վրա: Դրանցից մեկն այն է, թե ինչ ճանապարհով է ընթանում Տերտերյանը որևէ զեղարվեստական երկ քննելիս: Նա քննում է գրական երկի իդեական բովանդակությունը՝ կապված որոշ սոցիալական միջավայրի հետ, և այնուհետև ցույց տալիս, թե ինչ զեղարվեստական ձևի մեջ է արտահայտված տվյալ բովանդակությունը և ապա՝ որքան է դա հարմար կամ որքան է վիճակի է ընթերցողին լիցք տալու, մտքերով ու գգաքմունքներով վարակելու: Միաժամանակ նա բացահայտում է ոչ միայն այն, ինչ տարբերում է գրողին յուրնախորդներից, այլև այն, ինչ միացնում է նրան այդ նախորդների հետ, և վերջապես շնչում այն, ինչով որևէ կապվում է գրականության գալիքի հետ: Այլ կերպ ասած՝ նա գնում է գրական ժառանգության խնդիրը, այսինքն, թե ինչ է ստացել տվյալ հեղինակը հայ և օտար գրականություններից և ինչ ժառանգություն է թողել հետագային, առանձնապես մեր այսօրվա սոցիալիստական կուլտուրայի համար: Բայց անվանի գիտնականը չի սահմանափակվում դրանով, նա չի բավարարվում սոսկ տվածը քննելով, այլ իր հերթին գրականության առջև գնում է նոր նպատակներ ու խնդիրներ, որոնց զեղարվեստական մարմնավորման ուղղությամբ պետք է ընթանա գրականությունը հետագայում:

Տերտերյանի հետազոտական մեթոդի ղեկավար սկզբունքը ժողովրդադայնության սկզբունքն է, որը սերտորեն կապված է ռեալիզմի հետ. «Եթե կյանքի պատկերումը ճիշտ է, ապա և ժողովրդային է» (Բելինսկի): Ժողովրդադայնության տարբերը նա որոնում է գրական լեզվի, ֆուկլորի, կենցաղագրության և այլնի մեջ: Բայց ժողովրդադայնության էությունը նա տեսնում է պատմական ոեալ իրականության ճշմարիտ, խոր ու բազմակողմանի արտացոլման, ժողովրդի կյանքի հիմունքների, նրա կարիքների ու տառապանքների բացահայտման մեջ, լավագույն՝ ապագայի համար նրա մղած պայքարի մեջ: Որպես ժողովրդադայնության չգերազանցված օրինակներ հայ գրականության մեջ, Տերտերյանն ընդգծում է Պարոնյանի և Թումանյանի ստեղծագործությունները: Հայրենական Մեծ պատերազմը խորացրեց ժողովրդադայնության ըմբռնումը՝ դրսևորելով ազատագրության համար ժողովրդի մղած պայքարի հերոսությունը: Այդ դիտակետից էլ հեղինակը արժեքավորում է մի քանի հայ կլասիկների ստեղծագործությունները:

Առաջ քաշելով մեր գրականության ժողովրդադայնությունը, ինչպես վերնասացինք, հարգելի հեղինակը դրան միացնում է ռեալիզմի պահանջը, ըստ որում ռեալիստական մեթոդի կազմից չհանելով ակտիվ ոռմանտիզմի տարրերն ու հնարները, որոնց մասին այնքան գովասանքով է խոսել Մ. Դորկին, ինքը ևս երիտասարդության տարիներին տուրք տալով դրան, Նշելով ռեալիստական էսթետիկայի սկզբունքներից՝ հեղինակը բազմակողմանիորեն լուսաբանում է արժեքավորում է հայ կլասիկ ռեալիստների (Պարոնյանի, Ալենդուկյանի, Նար-Դոսի, Թումանյանի, Օտյանի) ստեղծագործությունները, ցույց տալիս դրանցից յուրաքանչյուրի պաշտպանած ռեալիստական մեթոդի առանձնահատկությունները, որոնք իրենց հիմքում ունեն հեռու-

դական հանրային մտածողություն, իրականության ճշմարիտ ըմբռնում: Ուսումնասիրողն ապացուցում է, որ պաշտպանելով «կյանքը, ինչպես որ է» սկզբունքը՝ հայ ռեալիստները մնում են ոչ թե սոսկ կյանքի փաստերի հումեփարձանագրման աստիճանին, այլ բարձրանում են մինչև ԲՆԳադառվածու ռեալիզմի գիտականը գատավճիռ կարգալով կյանքի հետամնացության դեմ, դիմակազերծ անելով կղերաֆեեղալական և ռուրթուական կյանքի այլանդակ երևույթները: Այդ իմաստով բոլորովին նոր գնահատության են ենթարկվում Սունդուկյանի ստեղծագործությունը և նրա ռեալիստական մեթոդը: Ետ մղելով մեծագույն դրամատուրգի մասին դոյություն ունեցող թյուր հասկացողությունները՝ նա գրում է. «Սխալ է Սունդուկյանի ռեալիզմն ամբողջությամբ կապել ռուրթուագիայի հետ. դա քննադատական ռեալիզմ է, ուրեմն իր ընդերքով կապված է ժողովրդի հետ և դիմակները պատռելու կոչում ունի: Եթե այս կամ այն չափով դրամատուրգը իր մտայնության մեջ լիբերալիզմի տարրեր է ունեցել, նա այդ բոլորը մի հայտնի չափով հաղթահարել է՝ կյանքը հարազատությամբ արտացոլելով» (էջ 239):

Գրախոսվող հատորի մյուս արժանիքն այն է, որ մեր կլասիկ պատմավիպասանության ուսումնասիրությամբ հեղինակն այստեղ փորձում է ընդհանուր շարիխներով տալ հայ պատմական վեպի տեսությունը: Առանձին առանձին նա քննութագրում է թե Մերենցի, թե Րաֆֆու և թե Մուրացանի պատմական վեպերի գիտական-փիլիսոփայական արժեքը, նրանց պատմահայեցողությունը, վերջինիս առանձնահատկությունները, ինչպես և մեկնաբանում այդ նույն վեպերի գրական-գեղարվեստական հատկությունները:

Իր աշխատության մեջ հեղինակը այս կամ այն առիթով շոշափում է հայ-ռուսական գրական կապերի ու փոխհարողակցության պրոբլեմը: Նա ցույց է տալիս, թե ինչպիսի ուշադրությամբ են ուսումնասիրել հայ կլասիկները ռուս մեծ գրողների գեղարվեստական բարձր արվեստը և վերջինիս բովանդակությունը՝ հումանիստական հայեցողությունը: Այսպես, նշելով Սունդուկյանի համակրական վերաբերմունքը ռուս գրականության և բեմի նկատմամբ, Տերտերյանը կոնկրետ փաստերով ապացուցում է, որ հայ դրամատուրգը իր ուսումնասիրության շրջանում շատ քան է սովորել Գրիբոեդովից, Դոբոլից, Օստրովսկուց և իր գեղարվեստական ճաշակը կրթելով այնպիսի ռուս նշանավոր դերասանների օրինակելի խաղի միջոցով, ինչպիսիք են Կարատիգինը և Շչեպկինը: Այնուհետև վերլուծելով Թումանյանի ստեղծագործությունը և ընդգծելով նրա համամարդկայնությունը՝ հեղինակը պարզաբանում է Պուշկինի, Լերմոնտովի, Դորկու հայրենասիրության հետ Թումանյանի ունեցած որոշ կապերը, մեկնաբանում մեծ բանաստեղծի ռուսասիրության էությունը:

Տերտերյանը բուռն սեր է տածում դեպի հայ ժողովրդի գեղարվեստական մշակույթն ընդհանրապես և կլասիկ գրականությունը մասնավորապես: Խոսում է նա մեր գրականության մասին, թե ուրվագծում է այդ գրականության հիմնական սյուները կազմող գրողներին, պատմում է դարաշրջանի մասին, թե մի առ մի թվում գրականության հիմնական մոտիֆներն ու տենդենցները, միևնույն է՝ բոլոր դեպքերում էլ զգում ես հեղինակի անսահման սերը դեպի հայ ժողովրդի հոգևոր մշակույթը: Եվ այն խոր զգացմունքը, որով տոգորված է ինքը՝ նա կարողանում է գեղարվեստագետի հմտությամբ փոխանցել ընթերցողին: Տերտերյան-գրականագետի

քնորոշ գծերից է այն, որ նա կիրառում է համեմատական մեթոդը, նա հետազոտվող հեղինակին կապում է իր նախորդների, իր հետ միասին միևնույն նյութը մշակողների շրջապատի հետ: Այդ կերպ նա ավելի ցայտուն է դարձնում գրողի անհատականությունը: Իր աշխատության մեջ Տերտերյանը հաջողությամբ օգտագործում է պոլեմիկական ժանրը, որի սլաքներն ուղղված են հայ լեզբերալ բուրժուական քննադատության և գոեհիկ-սոցիոլոգիզմի դեմ: Ոոսելով այս կամ այն գրողի մասին, հեղինակը նշում է նրա շուրջը ստեղծված վիճելի հարցերը և հերքում նրա մասին եղած անհիմն ու սխալ տեսակետները, աշխատում ճշմարտացիորեն գնահատել տվյալ հեղինակի ստեղծագործական դեմքը: Ընթերցողի ուշադրությունից չի վրիպում և այն, որ Տերտերյանը հմուտ է տեղին և դիպուկ մեջբերումներ կատարելու մեջ:

Վերջապես, ուսանելի է գիտնականի լեզուն ու ոճը. նրա գրիչը շարժվում է չափազանց սահուն ու կոկ, լեզուն պատկերավոր է, աշխույժ, ոճը կենդանի ու էմոցիոնալ, որի հետևանքով նրա մոտ իսպառ բացակայում է ակադեմիական չորությունը: Իսկ այն տեղերում, ուր նա բանավեճ է մղում, նրա գրիչը դառնում է հատու և բառերի շարադրությունը կուռ ու միաձույլ, իսկ ոճը ստանում է երգիծական շեշտ:

ԳՐ. ՍԱՐԳՍՅԱՆ